ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

5 սեպտեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,

Հրայր Թովմասյանի,

Երվանդ Խունդկարյանի,

Հովակիմ Հովակիմյանի (զեկուցող),

Էդգար Շաթիրյանի,

Սեդա Սաֆարյանի,

Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Հովակիմյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի մարտի 31-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2023 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի հունիսի 26-ի N 837-Ա որոշմամբ հավանություն է տվել «2025 թվականի մարտի 31-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2023 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի հուլիսի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Տ .**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2023 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի մարտի 31-ին Երևանում՝ նպատակ ունենալով ամրապնդել և խորացնել բարեկամական հարաբերությունները ֆինանսական համագործակցության միջոցով, ինչպես նաև նպաստել Հայաստանի Հանրապետության սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի պահանջներին համապատասխանող զարգացմանը:

2. Համաձայնագրով Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ ընդունող կողմերի հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից ստանալու մինչև 26.000.000 (քսանվեց միլիոն) եվրո վարկ՝ «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության զարգացում. փուլ IV» ծրագրի համար, եթե ուսումնասիրությունները հաստատեն ծրագիրն օժանդակելու նպատակահարմարությունը, ինչպես նաև մինչև 2.000.000 (երկու միլիոն) եվրո դրամաշնորհ՝ վերոնշյալ ծրագրի իրականացման և խորհրդատվության համար անհրաժեշտ հարակից միջոցառումների համար (հոդված 1, պարբերություն 1):

3. Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ վարկառուների հնարավորություն է ընձեռում ստանալու նաև մինչև 40.000.000 (քառասուն միլիոն) եվրո արտոնյալ վարկ «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության զարգացում. փուլ V» ծրագրի համար, որը Վերականգնման վարկերի բանկի միջոցով հատկացվում է Զարգացման հանրային համագործակցության շրջանակում, ինչպես նաև մինչև 1.000.000 (մեկ միլիոն) եվրո դրամաշնորհ՝ վերոնշյալ ծրագրի իրականացման և խորհրդատվության համար անհրաժեշտ հարակից միջոցառումների համար (հոդված 1, պարբերություն 2):

4. Համաձայնագրով նախատեսվում է նաև անհրաժեշտության դեպքում տրամադրել այնպիսի լրացուցիչ դրամաշնորհներ, որոնք ուղղված կլինեն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված ծրագրերի նախապատրաստմանը կամ անհրաժեշտ հարակից միջոցառումներին, եթե կառավարությունները երկուստեք ցանկանան շարունակել օժանդակությունը (հոդված 1, պարբերություն 3):

5. Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված գումարի օգտագործումը և այն պայմանները, որոնցով այդ գումարը տրամադրվում է, ինչպես նաև հանձնարարականներ տալու ընթացակարգը սահմանվում են Վերականգնման վարկերի բանկի և վարկեր ընդունողների միջև կնքվող պայմանագրերով, որոնք ենթարկվում են Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությանը (հոդված 2, պարբերություն 1):

6. Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված գումարների հատկացումը անփոխարինաբար չեղարկվում է, եթե Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերը չեն կնքվում հատկացման տարվան հաջորդող հինգ տարիների ընթացքում: Այդ գումարների համար սահմանված ժամկետն ավարտվում է 2028 թվականի նոյեմբերի 21-ին: Եթե Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերը նախատեսված ժամանակահատվածում կնքված են լինում հատկացումների միայն մի մասի համար, ապա չեղարկման այս դրույթը վերաբերում է միայն այդ պայմանագրերով դեռևս չամրագրված առանձին գումարներին (հոդված 2, պարբերություն 2):

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

7.1. երաշխավորել Վերականգնման վարկերի բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված կնքվելիք վարկային պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների (հոդված 2, պարբերություն 3),

7.2. տալ երաշխիք Վերականգնման վարկերի բանկին, որ կկատարվեն հետվճարման այն պահանջները, որոնք կարող են ծագել Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք դրամաշնորհային պայմանագրերից, եթե դրամաշնորհներ ստացողն ինքը կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը չէ (հոդված 2, պարբերություն 4),

7.3. ազատել Վերականգնման վարկերի բանկին ուղղակի հարկերից, որոնք Հայաստանի Հանրապետությունում ենթակա են վճարման՝ կապված Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված ծրագրերի կամ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման հետ (հոդված 3):

8. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությանը ծանուցում է Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին (հոդված 4, պարբերություն 1):

9. Համաձայնագրի՝ Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 102-րդ հոդվածի՝ գրանցումը կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո (հոդված 4, պարբերություն 2):

10. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2025 թվականի մարտի 31-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2023 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

5 սեպտեմբերի 2025 թվականի
ՍԴՈ-1795